


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2003թ. հունվար-օգոստոս		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, %	2003թ. հունվար-օգոստոս	2002թ. հունվար-օգոստոս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	527490.3	112.2	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	398658.1	113.6	75.6	74.5
բնակչությանը մատուցված ծառայություններ	128832.2	108.9	24.4	25.5

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(ընդհանուրի նկատմամբ %)



2003թ. հունվար-օգոստոսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 12.2% աճ՝ 2002թ. հունվար-օգոստոսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով: Ընդ որում, դրանում 1.1 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2003թ. հունվար-օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 398658.1 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 13.6%-ով: 2003թ. օգոստոսին հուլիսի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 105.9%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-օգոստոսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	398658.1	100.0
<i>այդ թվում՝</i>		
խանութներ	224244.4	56.3
հանրային սնունդ	4505.3	1.1
սպառողական ապրանքների շուկաներ	112453.8	28.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	15824.6	4.0
կրպակներ	41630.0	10.4

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-օգոստոսին

(ընդհանուրի նկատմամբ, %)



2003թ. հունվար-օգոստոսին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 94.9% (378328.2 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվար-օգոստոսին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 112453.8 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի, 2003թ. հունվար-օգոստոսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	103118.7	12.4	87.6
Արագածոտն	176.2	-	100.0
Արարատ	586.6	11.0	89.0
Արմավիր	1504.1	32.2	67.8
Գեղարքունիք	895.5	30.1	69.9
Լոռի	2237.7	51.9	48.1
Կոտայք	1412.8	15.8	84.2
Շիրակ	810.8	-	100.0
Սյունիք	391.1	10.0	90.0
Վայոց ձոր	128.3	-	100.0

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ %-ով ընդհանուրի նկատմամբ	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Տավուշ	1192.0	33.4	66.6
Ընդամենը ՀՀ	112453.8	13.8	86.2

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2003թ. հունվար-օգոստոսին, կազմել է 86.2%:

**ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության
ընդհանուր ծավալն ըստ ՀՀ մարզերի**
(ընդհանուրի նկատմամբ %)



2003թ. հունվար-օգոստոսին 2002թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ 0.9 տոկոսային կետով:

2003թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 42022.0 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 53 օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-օգոստոսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.0% կամ 15824.6¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 128832.2 մլն. դրամ, որը 2002թ. հունվար-օգոստոսի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 8.9%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 2067.0 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 42.6%-ով:

2003թ. հունվար-օգոստոսին 2002թ. հունվար-օգոստոսի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.9% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (7.9%), փոստային և հեռահաղորդակցության (9.5%), կրթության (2.8%), մշակույթի (6.5%), զբոսաշրջության և էքսկուրսային (0.8%), առողջարանների և հանգստյան տների (0.4%) ծառայությունների սակագների հավելաճով: Կենցաղային և բժշկական սպասարկման ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը
2003թ. հունվար-օգոստոսին

(ընդամենի նկատմամբ %)



2003թ. հունվար-օգոստոսին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (41366.0 մլն. դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (34779.7 մլն. դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 32.1 և 27.0 %:

2003թ. հունվար-օգոստոսին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 1341.3 մլն. դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 1.0%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 105.5 մլն. դրամ: